Անվճար վարքագծային առողջության ծառայությունները հասանելի են Կալիֆոռնիայի աշակերտների և ուսանողների համար

Աջակցեք ձեր երեխայի հոգեկան առողջությանը առանց լրացուցիչ ծախսերի

Կալիֆոռնիայի հանրային կրթական հաստատությունները՝ այդ թվում K–12 դպրոցական շրջանները, տրամադրում են ԱՆՎՃԱՐ վարքագծային առողջական ծառայություններ, առանց որևէ վճարի: Աջակցության այս ծառայություններն ապահով են, գաղտնի և տրամադրվում են համալսարաններում կամ դպրոցական ծրագրերի միջոցով:

Ի՞նչ է վարքագծային առողջական խնամքը

Վարքագծային առողջական խնամքը ներառում է աջակցություն հոգեկան առողջության խնդիրների և թմրամոլության խանգարումների դեպքում: Աշակերտները, ուսանողներն ու նրանց ընտանիքի անդամները կարող են օգնություն ստանալ հետևյալ դեպքերում.

- Սթրես, տագնապ կամ դեպրեսիա
- Հուզական ոլորտի խնդիրներ
- Թմրամոլություն կամ կախվածություն
- Ընդհանուր հոգեկան բարեկեցություն

Ինչպե՞ս է դա աշխատում

Շատ դպրոցներ արդեն իսկ տրամադրում են հոգեկան առողջության ծառայություններ: Պետական նոր ծրագիր «Երեխաների և երիտասարդների վարքագծային առողջության նախաձեռնությունը» (CYBHI) վճարումների կազմակերպման ծրագիր է, որը օգնում է առողջության ապահովագրության ծրագրերի միջոցով դպրոցներին տրամադրել փոխհատուցում 0-25 տարեկան աշակերտներին և ուսանողներին վերոնշյալ ծառայությունները մատուցելու համար՝ անկախ նրանից՝ ունեն նրանք, թե չունեն Medi-Cal, մասնավոր առողջապահական պլան, կամ հաշմանդամության ապահովագրություն:

Սա կազդի՞ իմ ապահովագրության վրա, կամ պե՞տք է վճարել այս ծառայությունների համար

Ոչ: Տրամադրվող ծառայությունների համար ընտանիքներից լրացուցիչ գումար չի գանձվում:

- Ձեզ անդորրագիր **չեն** ներկայացնի:
- Ձեզանից **չի** գանձվի համավճար կամ հավելավճար:
- Ձեր ապահովագրության վրա **չի** անդրադառնա:

Ի՞նչ է պետք է անել

Եթե ձեր երեխան 18 տարեկանից փոքր է, հաճախում է Կալիֆոռնիայի հանրային դպրոց և ստանում է դպրոցում գործող վարքագծային առողջության ծառայություններ, ապա ձեզանից կարող է պահանջվել.

- Ստորագրել համաձայնության ձևաթուղթ
- Թարմացնել երեխայի ապահովագրական տվյալները, օրինակ՝
  - Երեխայի ապահովագրության քարտի պատճենը, և/կամ
  - երեխայի ապահովագրական պլանի անունը, փաթեթի համարը և ձեր անունը (եթե ապահովագրական փաթեթը ձեր անունով է):

Եթե 18 – 25 տարեկան եք, ապա դուք նույնպես կարող եք իրավասու լինել այս ծառայությունների համար:

Արդյո՞ք պահպանվում է իմ անձնական տվյալների գաղտնիությունը

Այո: Ձեր անձնական տվյալների գաղտնիությունը պաշտպանված է:

Ձեր ապահովագրական տվյալները միայն անհրաժեշտ են դպրոցին ծառայությունների դիմաց վճարի փոխանցման համար:

Կալիֆոռնիայի և դաշնային օրենքների համաձայն՝ ձեր երեխան և դուք ունեք անձնական տվյալների գաղտնիության պահպանման և պաշտպանության իրավունք:

Յուրաքանչյուր աշակերտ և ուսանող արժանի է ունենալ առողջական խնամքի հասանելիություն:

Եկեք համատեղ ջանքերով բարելավենք երեխաների և երիտասարդների առողջությունը Կալիֆոռնիայում:

Եթե ունեք հարցեր կամ աջակցության կարիք, ապա դիմեք դպրոցի ադմինիստրատորին, այցելեք www.dhcs.ca.gov/CYBHI, կամ ուղարկեք էլ.նամակ DHCS.SBS@dhcs.ca.gov հասցեին:

Ձեզ պե՞տք է առողջության ապահովագրություն

Դուք կարող եք Medi-Cal-ի իրավասություն ունենալ: Ապահովագրման համար սկանավորեք QR կոդը, կամ այցելեք my.medi-cal.ca.gov: